

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների
գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման մասին»
1995 թվականի նոյեմբերի 3-ի համաձայնագրում
փոփոխություններ կատարելու մասին**

**Պաշտոնապես
հաստատված
տեքստ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների
գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման մասին»**

**1995 թվականի նոյեմբերի 3-ի համաձայնագրում
փոփոխություններ կատարելու մասին**

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման մասին» 1995 թվականի նոյեմբերի 3-ի համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով գիտատեխնիկական, տեխնոլոգիական եւ նորարարական ոլորտներում համագործակցության հետագա զարգացման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով համաշխարհային լավագույն գործելակերպերն ու համաշխարհային փորձը, ինչպես նաեւ գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիաների եւ նորարարությունների զարգացման համաձայնեցված առաջնահերթ ուղղություններում միջազգային գիտատեխնիկական կապերի ամրապնդման անհրաժեշտությունը,

ընդունելով գիտատեխնիկական, տեխնոլոգիական եւ նորարարական ոլորտներում միջպետական կոոպերացիայի զարգացման կարեւորությունը,

նպատակ ունենալով իրականացնել համաձայնեցված գիտատեխնիկական քաղաքականություն, ինչպես նաեւ ղեկավարվելով «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման մասին» 1995 թվականի նոյեմբերի 3-ի համաձայնագրի 8-րդ հոդվածով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման մասին» 1995 թվականի նոյեմբերի 3-ի համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) կատարել հետեւյալ փոփոխությունները.

1. Համաձայնագրի նախաբանից՝

երկրորդ, վեցից տասներկուերորդ պարբերությունները հանել.

«պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին» բառերից առաջ ավելացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«նպատակ ունենալով պայմաններ ապահովել ընդհանուր գիտատեխնոլոգիական տարածության արդյունավետ գործունեության համար»:

2. Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածությունը նախատեսում է նաեւ սույն Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետությանը սույն Համաձայնագրի այլ մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական տարածությունների, գիտատեխնոլոգիական ապրանքների եւ ծառայությունների շուկաների օգտագործման հնարավորության տրամադրում՝ ազգային օրենսդրությանը համապատասխան»:

3. Համաձայնագրի 2-րդ հոդվածի առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Կողմերը, իրենց պետությունների օրենսդրություններին համապատասխան, համաձայնում են փոխգործակցություն ապահովել կոնկրետ խնդիրների լուծման համար, որոնք ուղղված են՝»:

4. Համաձայնագրի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կողմերը որպես սույն համաձայնագրի իրականացման հիմնական պայման դիտում են գիտատեխնոլոգիական ոլորտի առաջնահերթության ճանաչումը սույն համաձայնագրի բոլոր մասնակից պետությունների կողմից, որն արտահայտվում է համապատասխան նորմատիվ իրավական բազայի զարգացման անհրաժեշտությամբ եւ սվյալ ոլորտի պետական ֆինանսավորման երաշխավորված մակարդակի պահպանմամբ»:

5. Համաձայնագրի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Միջպետական գիտատեխնիկական, տեխնոլոգիական եւ նորարարական համագործակցության համակարգ ձեւավորելու, այդ ոլորտներում ինտեգրումը խորացնելու նպատակով Կողմերը՝ իրենց պետությունների օրենսդրություններին եւ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերին համապատասխան՝

ձգտում են մշակել եւ իրականացնել գիտական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական եւ նորարարական նախագծեր ու ծրագրեր, այդ թվում՝ համատեղ.

զարգացնում են կոոպերացիան գիտական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական եւ նորարարական ոլորտներում, այդ թվում՝ կոնսորցիումի ձեւով.

աջակցություն են ցուցաբերում գիտական կազմակերպություններին.

զարգացնում են միջգրադարանային արձանեմենտի համակարգը.

իրականացնում են գիտատեխնիկական տեղեկատվության, հետազոտությունների արդյունքների, մշակումների, նոր տեխնոլոգիաների փոխանակում.

զարգացնում են փոխգործակցությունը բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման, մասնագիտական վերապատրաստման եւ մասնագետների որակավորման բարձրացման ոլորտում՝ հաշվի առնելով ԱՊՀ համապատասխան բազային կազմակերպությունների հնարավորությունները.

ապահովում են գիտատեխնիկական, տեխնոլոգիական եւ նորարարական ոլորտներում օրենսդրության կատարելագործումը՝ հաշվի առնելով համաշխարհային լավագույն գործելակերպերն ու համաշխարհային փորձը, այդ թվում՝ մոդելային օրենքների հիման վրա.

ստեղծում են պայմաններ միջպետական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական եւ նորարարական գործունեության ենթակառուցվածքի զարգացման համար.

օժանդակում են ակադեմիական շարժունության զարգացման համատեղ ծրագրերի ձեւավորմանը»:

6. Համաձայնագրի 6-րդ հոդվածում՝

1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Բազմակողմ գիտահետազոտական ծրագրերի եւ նախագծերի շրջանակներում գիտատեխնիկական եւ նորարարական աշխատանքներին ԱՊՀ մասնակից պետությունների գիտնականների եւ մասնագետների մասնակցության ֆինանսավորումը յուրաքանչյուր Կողմ իրականացնում է ինքնուրույն՝ ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով, այդ թվում՝ Կողմերի (իրենց տնտեսավարող սուբյեկտների) կողմից ներգրավվող արտաբյուջետային աղբյուրների հաշվին»:

3-րդ կետը հանել:

7. Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-ին կետը հանել:

8. Համաձայնագրի հավելվածը հանդիսացող՝ «Գիտատեխնիկական եւ նորարարական ոլորտներում համագործակցության հարցերով միջպետական խորհրդի մասին» կանոնադրությունից՝

«ԳՏՆ ՄԽ գործունեության հիմնական ուղղություններն ու գործառույթները» II բաժնի 2.3 կետի հինգերորդ պարբերությունը հանել.

«ԳՏՆ ՄԽ աշխատանքի կազմակերպումը» III բաժնի 3.1 կետի հինգերորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Անհրաժեշտության դեպքում ԳՏՆ ՄԽ որոշմամբ նրա աշխատանքներին կարող են մասնակցել գիտությունների ազգային (պետական) ակադեմիայի, ԱՊՀ ոլորտային համագործակցության մարմինների, գիտական շրջանակների, ԱՊՀ մասնակից պետությունների եւ երրորդ պետությունների ձեռնարկությունների ու կազմակերպությունների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների եւ տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների ներկայացուցիչներ»,

«ԳՏՆ ՄԽ աշխատանքի կազմակերպումը» III բաժնի 3.3 կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ԳՏՆ ՄԽ նիստերին նրա անդամների եւ մասնակիցների գործուղման եւ մասնակցության հետ կապված ծախսերը ինքնուրույն կրում են գործադիր իշխանության գործուղող մարմինները եւ կազմակերպությունները»,

«ԳՏՆ ՄԽ աշխատանքի կազմակերպումը» III բաժնի 3.7 կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ԳՏՆ ՄԽ գործունեության ապահովման նպատակով ստեղծվում է Խորհրդի քարտուղարություն: Քարտուղարության գործառույթները վերապահվում են ԱՊՀ մասնակից պետության գործադիր իշխանության այն մարմնին, որի ղեկավարը նախագահում է ԳՏՆ ՄԽ-ն ԱՊՀ գործադիր կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանման հետ համատեղ:

ԳՏՆ ՄԽ քարտուղարության ղեկավարը ԳՏՆ ՄԽ-ն նախագահող պետական իշխանության մարմնի ներկայացուցիչն է, իսկ քարտուղարության ղեկավարի տեղակալը՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը»:

Հոդված 2

Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին այն ստորագրած Կողմերի երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Կատարված է 2022 թվականի մայիսի 20-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Ռուսաստանի Դաշնության
կառավարության կողմից՝**

Մ. Միշուստին

**Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Տաջիկստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

Մ. Գրիգորյան

Կ. Ռասուլզոդա

**Բելառուսի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Թուրքմենստանի
կառավարության կողմից՝**

Ռ. Գոլովչենկո

**Ղազախստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Ուզբեկստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

Ա. Սմայիլով

Ա. Արիպով

**Ղրղզստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Ուկրաինայի կառավարության
կողմից՝**

Ա. Ժապարով

**Մոլդովայի Հանրապետության
կառավարության կողմից՝**

Սույնով հավաստում եմ, որ կից ներկայացվող տեքստն Անկախ Պետությունների Համագործակցության կառավարությունների ղեկավարների խորհրդի 2022 թվականի մայիսի 20-ի նիստին տեսակոնֆերանս կապի օգտագործմամբ մասնակցած՝ ԱՊՀ մասնակից պետությունների պատվիրակությունների ղեկավարների կողմից ստորագրման արդյունքների հիման վրա ձեւակերպված՝ «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման մասին» 1995 թվականի նոյեմբերի 3-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նույնական պատճենն է: Վերոհիշյալ արձանագրության օրինակները ստորագրությունների բնօրինակների հետ պահվում են Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում:

ԱՊՀ գործադիր կոմիտեի

նախագահ - գործադիր

[ստորագրություն, կնիք]

քարտուղարի առաջին տեղակալ՝

Լ.Վ. Անֆիմով